



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՆՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ



ունիսի 23-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տոնի օրը, փակվեց Հոգևոր Ճեմարանի 1956—1957 ուսումնական տարին, գոհացուցիչ արդյունքներով, ինչպես երևում է մեր ամսագրի սույն համարում տպված Հոգևոր Ճեմարանի տեսչության տարեկան ընդհանուր զեկուցագրից:

Հոգևոր Ճեմարանի կյանքում վերջացող 1956—1957 ուսումնական տարին անցավ վեհափառ Հայրապետի անմիջական հսկողության և առաջնորդության տակ, է՛լ ավելի կազմակերպված և արդյունավետ, Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից նախատեսված ծրագրով և ձեռք առնված ուսումնադաստիարակչական անհրաժեշտ միջոցառումներով, ինչպես նաև Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմի բարեսիրտ և ազնիվ աշխատանքի և ամբողջ ուսանողության ցուցաբերած աշխատասիրության և կարգապահության շնորհիվ:

Սրտի մեծ գոհունակությամբ պետք է արձանագրել այստեղ այն փաստը, որ Հոգևոր Ճեմարանը անցնող ուսումնական տարեշրջանում մի քայլ ևս մոտեցավ իր հարազատ նկարագրի և հոգևոր կոչման բարձրության:

Հոգևոր Ճեմարանը Վեհափառ Հայրապետի սրտին մոտ և հարազատ հաստատություն է, որի զարգացման և ապագայի հետ նորին Ս. Օծությունը կապել է սրտառույ հույսեր և ակնկալություններ: «Մեր երազն է,— ասաց Վեհափառ Հայրապետը Ճեմարանի ամսվերջի հանդիսության օրը արտասանած իր դեղիցիկ «ճուսկ բան»-ի մեջ,— Մեր կյանքի նպատակն է շենցենել, ուրախացնել հազարավա Ս. Էջմիածինը՝ պարզելով անոր

հավատավոր, անբասիր և անձնվեր սպասավորներ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը գլուխն է մեր Ս. Եկեղեցիին, և ան իր զինվորյալ միաբանությամբ և հոգևոր Ճեմարանով պետք է զառնա լուսատու փառս, օրինակ, առաջնորդ և ներշնչարան համայն հայ հոգևորականության և հայ հավատացյալ ժողովրդին:

Այս գաղափարների և ծրագրերի իրագործման ճանապարհի վրա, Վեհափառ Հայրապետը Ճեմարանը շրջապատել է գուրգուրանով և հայրական ջերմությամբ, վառ հույսեր կապելով նրա գոյության և նպատակներին:

Անցյալում մենք ունեցել ենք ուսումնասեր շատ հայրապետներ, որոնք քաջ գնահատելով ուսման ու դաստիարակության արժեքը՝ որ «զի որ կամակոր է յուսման է անկանի ի շարիս և որպէս կուրուրին աչաց ատելի է մարմնոյ, նոյնպէս և տգիտութիւն ոգոյ ատելի է Աստուծոյ» («Կանոնք Սրբոյն Սահակայ Հայոց Կարողիկոսի»)՝ հիմնել են բազմաթիվ դպրոցներ, ժառանգավորաց վարժարաններ, հոգևոր ճեմարաններ, լույս և գիտություն են տարածել ժողովրդի մեջ:

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ և ծրագրի համաձայն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը կոչված է մեծ ու պատվավոր դեր կատարելու Հայ Եկեղեցու կյանքում, մեր հոգևոր վերազարթոնքի այս խոստմնալից օրերին, իր կոչման և պարտականության գիտակից, բազմակողմանիորեն զարգացած հավատավոր ու հայրենասեր հոգևորականություն պատրաստելու ասպարեզում:

«Մենք մեր ուսանողներեն շատ բան կսպասենք,— ասաց Վեհափառ Հայրապետը

ձեմարանի հանդեսին, — շատ քան կյանհան-
րենք, Ս. էջմիածնի Հոգևոր ձեմարանը իր
սաներեն կյանհանրեն ավելին քան կրթական
որևէ հաստատություն: ... Մենք կկամենանք
նաև, որ իմացական ձեռ կարողություններով
ըլլաք ուշիմ, արթուն, ճիշտ և արագ ըմբռնեք
ու հասկենաք Ձեր շրջապատը և հիմնովին յու-
րացնեք այն, ինչ որ ձեռ ուսուցիչները ձեզ
կսորվեցնեն: Դուք պետք է գիտություն ամ-
բարեք անհագ ծարավով և սիրով, մանավանդ
եթե ուղղությամբ պետք է լավ գիշերվի՝
ա) սրբազան գիտելիքներով, բ) հայերենով
և գ) հայ ժողովրդի պատմությամբ: Դուք
ոչ միայն պետք է սորվիք այս բոլորը, այլ
տիրապետեք անոնց: Հայոց պատմությունը
ձեմարանականի համար պետք է ըլլա երկ-
րորդ Ավետարան: Տարիներ հետո, երբ դուք
հարգեք մեր ժողովրդին, ձեր վեկ ձեռքին
պետք է ունենաք Հիսուսի Ավետարանը, իսկ
մյուս ձեռքին՝ հայոց պատմության գիրքը:

Հոգևոր ձեմարանի ուսանողության առաջ
վեհափառ Հայրապետը խնդիր է դրել՝ ոչ
միայն ժաշան մեղուների նման գիտություն
և լույս ավարել իրենց մտքի գանձարան-
ներում, այլ նաև ձգտել հասնելու բարոյական
և հոգևոր նկարագրի կերտմանը, ազնիվ
զգացմունքների և քրիստոնեական, առաքի-
նությունների մշակման և զարգացման:

«Մենք կուզենք նաև, — ասաց վեհափառ
Հայրապետը խոսքի ուղղելով ձեմարանի ու-
սանողության, — որ դուք դառնաք բարոյա-
կան նկարագրի տեր մարդեր: Եվ այս կընդ-
գծենք մասնավոր կարևորությամբ: Առանց
բարոյական առաքինություններու, հոգևորա-
կանը կծախողի իր ասպարեզին մեջ անխու-
սափելի կերպով: Ներքին, հոգեկան հավա-
սարակչություն և կարգապահություն, ան-
շահախնդրություն, համեստություն, պար-
կեշտություն, եղբայրսիրություն և այս բո-
լոր առաքինություններուն քաղն ու պսա-
կը՝ մահուր հավատք և սեր և հավատարմու-
թյուն առ Աստված և դեպի մեր Ս. էջմիա-
ծինը»:

Առաջին համաշխարհային պատերազմի
օրերին դառն, ողբերգական հակառակորդ
վիճակվել նաև մեր եկեղեցուն և հոգևորակա-
նությունը: Հայ եկեղեցականությունը, հավա-
տարիմ իր եկեղեցական և ազգային դարա-
վոր ավանդություններին, ապրեց իր պատ-
մության ամենաողբերգական էջերից մեկը,
ապրեց իր արյունոտ Գողգոթան, և Արևմուտ-
յան Հայաստանում ամայացան մեր երբեմ-
նի ծաղկյալ հոգևոր կենտրոններն ու նեմա-
րանները, շեն ու պայծառ վանքերը:

Համազգային այդ մեծ աղետից հետո դեռ
լիով չափով ոտքի չի կանգնել Հայ եկեղեցին:
Եվ ահա մեր երիտասարդ և կորովի Հայրա-

պետի ուսերին է ծանրանում սրտագին պար-
տականություն Մայր Աթոռի նոր միաբանու-
թյամբ, Հոգևոր ձեմարանով, մամուլով ու
բանին կենաց փարոսությամբ ոտքի կանգ-
նեցնել Հայ եկեղեցին, նոր շունչ ու ոգի տալ
նրան, համալրել նորացած եկեղեցական
շարքերը նոր ու խոստմնալից ուժերով և
այսօր ևս Հայ եկեղեցին դարձնել շեշող,
կենդանի, կազմակերպող հոգևոր մի հաս-
տատություն, հայ հավատացյալ ժողովրդի
հոգևոր-ազգային նկարագրի, բարոյական
բարեմասնությանը զարգացման գործում,
հայեցի շեշով և քրիստոնեական դաստիա-
րակությամբ:

Եվ ահա այս գեղեցիկ գաղափարների ի-
րականացման ճանապարհի վրա մեծ դեր է
վիճակված մեր Հոգևոր ձեմարանին:

Անցյալում, մեր մշակույթի պատմության
մեջ, խոշոր և շնորհակալ դեր են կատարել
մեր ժառանգավորաց վարժարանները, բն-
ծայարանները, դպրեվանդաններն ու հոգևոր
ձեմարանները: Էջմիածին, Դվին, Աղքամար,
Սանահին, Հաղբատ, Տաթև, Սիո, Երուսաղեմ,
Արմաշ և այլ հոգևոր կենտրոնների անուններ
վաղուց անցել են արդեն մեր մշակույթի
պատմության մեջ:

Ս. էջմիածնի Հոգևոր դպրոցը հազար-
ամյա պատմություն ունի: Այս նույն նվի-
րական վայրերում շատ վաղուց եղել են վա-
նական-եկեղեցական դպրոցներ՝ աշակեր-
տական մեծ խմբերով, որոնք եկել էին Վա-
ղարշապատ «Ի ԿՈՂՄԱՆՅ ԵՒ Ի ԳԱՆԱՌԱՅ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ՅՈՐԴԱՆԱԼԷ ԵՒ ԴԵՐ-
ԴԵՆԱԼԷ ՀԱՍԱՆԷՐ Ի ԲԱՅԵԱՆ ԱՂԲԵՐՆ ԳԻ-
ՏՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ...», քԱՆՁԻ ՅԱՅՐԱՐԱ-
ՏԵԱՆ ԳԱՆԱՌՆ ԲՂԵՑՅՐ ՀԱՅՈՑ ՇԵՆՈՐՀԷ
ՊԱՏՈՒԹԵԱՆԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ» (Կորյուն):

Հոգևոր ձեմարանը շարունակությունն է
անցյալում Գևորգյան ձեմարանի, որը տվել
է մեր ժողովրդին ոչ միայն հավատավոր,
բարձրորեն պատրաստված հոգևորականու-
թյան մի գիտնական սերունդ, այլ նաև հա-
յագետների, բանասերների, պատմաբաննե-
րի, մանկավարժների մի պատկառելի սե-
րունդ:

Գևորգյան ձեմարանում գոյություն ունե-
ցող անցյալի սրտագին ավանդությունները
այսօր ևս վեհափառ Հայրապետի օրով կյան-
քի են կոչվել նոր ձեմարանում: Վեհափառ
Հայրապետի քեյադրությամբ, Հոգևոր ձեմա-
րանի ուսումնական ծրագրում լայն տեղ է
հատկացվում հայագիտական առարկանե-
րին: 1957—1958 ուսումնական տարե-

շրջանի համար հրավիրվելու են մասնագետ պրոֆեսոր դասախոսներ հատկապես հայոց լեզվի, գրաբարի և հայ ժողովրդի պատմության դասավանդման համար: Ճեմարանի այս ուսումնական տարին փակելուց առաջ վերանայվեց ու ամրոցացվեց Հոգևոր Ճեմարանի ուսումնական ծրագիրը: Այդ ծրագիրը իր հիմնական գծերի մեջ մեր կրոնական բարձրագույն քննադատական ուսումնական ծրագիրն է: Բացի աստվածաբանական, եկեղեցագիտական և կրոնական այլ մասնագիտական առարկաներից, որոնք բնորոշում են Հոգևոր Ճեմարանի նկարագիրը, դասավանդվելու են նաև հայոց պատմություն՝ հին, միջին և նոր դասընթացներով, հայ եկեղեցական արվեստ, հայ եկեղեցական կանոնագիտություն, փյոյխոփայության պատմություն, տոմարագիտություն: Մասնագիտական առարկաներին զուգընթաց մեծ ուշադրություն է դարձվելու հանրակրթական առարկաների վրա, հատկապես լեզուների՝ գրաբարի, ռուսերենի, ֆրանսերենի:

Հունիսի 17-ին Վեհափառ Հայրապետի մոտ կայացած մանկավարժական խորհրդակցությունում, որտեղ ֆենուրյան առնվեցին 1957—1958 ուսումնական տարվա հետ կապված ուսումնա-դաստիարակչական հարցեր, կարևորությամբ նշվեց նաև հաջորդ սարիններին Հոգևոր Ճեմարանում կայուն և մասնագիտական դասագրքեր ունենալու և հրատարակելու անհրաժեշտությունը:

Հաջորդ ուսումնական տարում Հոգևոր Ճեմարանը կունենա հինգ դասարաններ՝ երեք դասարանական և երկուսը՝ յսարանական, մոտ 70 աշակերտական խմբով: Այս տարի ևս նախատեսված է մոտ 30 նոր ուսանողների ընդունելություն:

Վեհափառ Հայրապետի գեղեցիկ կարգադրություններից մեկն այն է, որ Ճեմարանի յսարանական բաժնում սովորող ուսանողները պետք է նախապես ընդգրկված լինեն հո-

գևորական ասպարեզում որպես սարկավագներ:

«Մենք կփափագենք արագ քափով պատրաստել վարդապետներ և ֆանաններ, — ասաց Վեհափառ Հայրապետը նույն հանդիսում, — դուք շատ լավ գիտեք և կտեսնեք, թե ինչքան մեծ է կարիքը հոգևոր մշակներու: Մենք, այո՛, կըղձանք շատ վեղարներ տեսնել Մեր շուրջը, բայց առավել կարևոր է Մեզ համար գիտնալ, թե ի՞նչ կա վեղարին տակ: Այս ոգիով է, որ պիտի առաջնորդվինք մենք այստեղ: ...Այստեղ կանգնած, այս սուրբ ֆառերուն վրա, ուխտենք կերտել նշմարիտ հոգևորականներ, նշմարիտ նկարագիրներ, մշակներ առանց ամոքի: ...Ով որ կկարողանա ըմբռնել և հասկնալ գեղեցկությունը այսպիսի կյանքի մը, ով որ կկարողանա ըմբռնել ու հասկնալ ֆառցությունը այս յուծին, ով որ հոգիով ուժեղ է, բող մեա մեր մեջ, բող մեա մեզ հետ»:

Վեհափառ Հայրապետի կողմից Հոգևոր Ճեմարանի համար ձեռք առնված այս բոլոր միջոցառումները գեղեցիկ ու խանդավառ ապացույցն են այն բանի, որ այսօր մանավանդ Հոգևոր Ճեմարանը դրվում է իր հոգևոր հունի և կոչման բարձրության վրա, որպեսզի այսօր նա հանդիսանա հայ կյանքում «աղբիւր բացեալ գիտութեանն Աստուծոյ»:

Հոգևոր Ճեմարանը, որպես Ամենայն Հայոց Հայրապետության կենտրոնական և բարձրագույն դպրոց, պետք է միշտ շրջապատված լինի հայ ժողովրդի սիրով ու գուրգուրանով:

Այսօր Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանը բոլոր հնարավորություններն ունի դառնալու իսկապես բովանդակ հայության ՀԱՄԱԶԳԱՅԻՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՕՁԱԽԸ, արժանի Ամենայն Հայոց Հայրապետության դիրքին և հեղինակության:

Ահա այսպիսի հուսադրիչ հեռանկարներով փակվեց Հոգևոր Ճեմարանի 1956—1957 ուսումնական տարին:

